


ՀԱՅՓ 4.0՝ «Շարժման մեջ» Հոկտեմբերի 29 – նոյեմբերի 1, 2015

ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը ներկայացնում է Արվեստի ինստալացիա և ներկայացում Երևան-Գյումրի գնացքում և ստեղծարար միջոցառումներով լեցուն հանգստյան օրեր Գյումրիում՝ տեղի գործընկերների հետ:



Ի՞նչ է ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը

HAYP-ը փոփ-ափ պատկերասրահ է, որը կազմակերպում է ժամանակավոր ցուցահանդեսներ Հայաստանի տարբեր վայրերում՝ անսպասելի վայրերում, օրինակ՝ խանութի դատարկ տարածքներում, վարձույթի համար նախատեսված շենքերում կամ լքված գործարաններում: Մենք հույս ունենք, որ կկարողանանք հնարավորություն տալ սկսնակ արվեստագետներին՝ յուրօրինակ ցուցադրության մոդելի և դինամիկ ծրագրավորման շնորհիվ ներգրավել տարբեր համայնքների, ինչպես նաև փոխել տարածության և արվեստի փոխակերպող պոտենցիալի ըմբռնումը:

«Շարժման մեջ» հոկտեմբերի 29 – նոյեմբերի 1, 2015

Սա ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահի չորրորդ ցուցադրությունն է: «Շարժման մեջ» վերնագիրը վերաբերում է մեր ինքնատիպ տարածությանը՝ գնացքին: Գնացքը միշտ շարժման մեջ է, և ինստալացիան ինքիին կարտացոլի տեղ ու ժամանակի անցումային վիճակը: Ինստալացիան ինտերակտիվ է լինելու և ցույց է տալու ժամանակի անցումը մարդկանց՝ արվեստի մեջ ներգրավման միջոցով:

Կլինի երեք տարբեր ինստալացիա. Երևան-Գյումրի բոլոր երեք գնացքների մեկական վագոնում: Հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 1-ը գնացքի ուղևորները կտեսնեն երեք ցուցահանդեսներից որևէ մեկը, սակայն թե որ մեկը նրանց բաժին կընկնի, անկանխատեսելի է:

- **Վագոն 1.** «Բույն»՝ օրիգամի ինստալացիա՝ Լիլիթ Մարկոսյանի և ՀԱՅՓ Փոփ-ափ սրահի կողմից: Հազարավոր օրիգամի կռունկներ կախված կլինեն գնացքի առաստաղից: Ինստալացիան խրախուսում է ուղևորներին թողնել իրեր «բներում», ինչպես նաև ստեղծել և ավելացնել իրենց սեփական օրիգամի կռունկները:
- **Վագոն 2.** «218 բուպե՝ շարժվող պատկեր»՝ Թումո կենտրոնի ուսանողների կողմից՝ հանրահայտ լուսանկարիչ Ջոն Լիի ղեկավարությամբ: Լուսանկարչական ինստալացիան ներառում է 2015թ.-ի Թումո ամառային դասընթացին ստեղծված աշխատանքները, որտեղ ուսանողները որսացել են 218 բուպե մարդկանց առօրյա կյանքից՝ սկսած սննդի մշակումից և փոխադրումից, մինչև խոհանոցում դրանց պատրաստումը: Այս արկածը սկսել է գնացքից և հասել մինչև Դիլիջան և Արցախ:
- **Վագոն 3.** «Քառասյին վագոն»՝ Երևանի և Գյումրու արվեստագետների խմբակային ցուցադրություն: Քառսը կյանքի անհրաժեշտ պայման է: Այս խմբակային ցուցահանդեսին Գյումրու և Երևանի արվեստագետներից յուրաքանչյուրը ձևափոխում է գնացքի մի հատվածը՝ ուղևորների համար ապահովելով



ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահ
Մամուլ հաղորդագրություն
27.10.2015

փոքրիկ ինտերակտիվ փորձառություն: Ուղևորներին ներգրավվելու նպատակով՝ արվեստագետներից ոմանք սրճարանային միջավայր են ստեղծում, ուրիշները գրքերով ապահովում, մինչ մյուսները առաջարկում են այլընտրանքային նստատեղեր և պերֆորմանս անում:

Մեր նպատակը՝

Մեր նպատակն է ներգրավել ուղևորներին, հատկապես այն մարդկանց, ովքեր սովորաբար չեն այցելում ժամանակակից արվեստի ցուցահանդեսներ, ինչպես օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում աշխատողները: Հույս ունենք ներկայացումների և ինտերակտիվ ինստալացիաների միջոցով ներգրավել ուղևորներին: Միաժամանակ երևանցիներն էլ առիթ կունենան այցելելու և բացահայտելու Գյումրին՝ Հայաստանի պատմական մշակութային մայրաքաղաքը: Մեր «Գյումրու քարտեզ»-ի միջոցով ուղևորներին կտեղեկացնենք տարբեր հետաքրքիր վայրերի, միջոցառումների, սննդի կետերի մասին՝ խրախուսելու համար հանգստյան օրերն անցկացնել երկրի երկրորդ քաղաքում: Հաջորդ էջում կարող եք գտնել միջոցառումների մասին մանրամասներ, ինչպես նաև այցելուների համար գործնական տեղեկատվություն:

Գյումրիում ՀԱՅՓ-ի առաջարկած միջոցառումների ցանկը՝

- «Լոյս ի լուսոյ» պրոեկցիա, լուսային և աուդիո ինստալացիա Էմիլի Մկրտիչյանի, Ալեքս Իգիդրաշյանի և Նատալի Սուքիասի (Studio Ondé) կողմից և Տիգրան Համասյանի կատարում: Ինստալացիան կներկայացվի հոկտեմբերի 29-31-ը, ժամը՝ 19:00-23:00 Գյումրու Իտալիայի հյուպատոսարանում (Գորկու փողոց, 3-րդ նրբանցք, բն. 36):
- Urban Design Lab Gyumri նախագիծ՝ հեղինակած Գեղանկարչության և ճարտարապետության ուսանողների և քաղաքային ճարտարապետ Յան Դոմսի կողմից: Դասընթացի հայեցակարգի, նպատակների և արդյունքների ներկայացում հոկտեմբերի 29-ին, ժամը 18:00-ին, ԲԵՌԼԻՆ ԱՐՏ ՀՈԹԵԼ Gallery 25-ում (Հաղթանակի 25):

Հովանավորներ՝ ԱՊԱԳԱ Թեքնոլոջիս

Գործընկերներ՝ Հարավ-Կովկասյան երկաթուղի, «Լոյս ի լուսոյ», ԲԵՌԼԻՆ ԱՐՏ ՀՈԹԵԼ, Գելերի 25, Շիրակ թուրք, ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, Գյումրի Ջազ ակումբ, Վիլլա Կարս, Գյումրու ընկերներ հիմնադրամ, Ֆոնդաթիոն Նարե, Էօն հակասրճարան

***Եթե դուք մտադիր եք գիշերել Գյումրիում, սպա դուք կստանաք 50% զեղչ ԲԵՌԼԻՆ ԱՐՏ ՀՈԹԵԼ և 40% զեղչ՝ Վիլլա Կարսում:*



ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահ
Մամլո հաղորդագրություն
27.10.2015

Կապ ՀԱՅՓ Փոփ-Ափ

info.hayp@gmail.com
www.haypopup.wordpress.com
facebook.com/haypopup
twitter.com/haypopup
instagram.com/hayp_pop_up

Ստեղծագործական բովանդակության և գործառնությունների համար

Աննա Գարգարյան
Համահիմնադիր, գործադիր և ստեղծագործական տնօրեն
099.741.626 | anna.gargarian@gmail.com

Միջոցառումների համակարգման համար

Շառլոթ Պուլէյն
Համահիմնադիր, ծրագրերի ղեկավար և հաղորդակցության համակարգող
077.177.452 | ckpoulain@gmail.com

Հյուրանոցի ամրագրման համար՝ Վիլլա Կարս

Հեռ. + 374 (0) 105 61156
family@arminco.com
www.villakars.com

ԲԵՐԼԻՆ ԱՐՏ ՀՈԹԵԼ

Հեռ. +374 (0) 312 57659
info@berlinhotel-gyumri.am
www.berlinarthotel.am

Էքսկուրսիաների ամրագրման համար՝

Շիրակ թուրք
Հեռ. +374 (0) 312 53148

Գործնական տեղեկատվություն՝

Գնացքների ամենօրյա չվացուցակը

7:55, 14:30, 18:10
(Երևանից Գյումրի)
8:25, 11:45, 18:05
(Գյումրիից Երևան)

Տոմսի արժեքը՝ 1000 դրամ (կարող եք ձեռք բերել գնացքում)

Եթե մտադիր եք գիշերել Գյումրիում, կստանաք 50% զեղչ ԲԵՐԼԻՆ ԱՐՏ ՀՈԹԵԼ և 40% զեղչ Վիլլա Կարսում



ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահ
Մամլո հաղորդագրություն
27.10.2015

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ

	Գնացքում	Գյումրիում
Հինգշաբթի, հոկտեմբերի 29	<p>08:25 Գյումրիից մեկնող գնացքում կենդանի երաժշտություն, պերֆորմանս</p> <p>14:30 Երևանից մեկնող գնացքում Բացման արարողություն, կենդանի երաժշտություն, ժամանակակից պարային ներկայացում</p>	<p>17:40 Գյումրու կայարանից շրջայց</p> <p>18:00 Urban Design Lab Gyumri -ի ցուցադրությունը Gallery 25-ում: Նախագիծը հեղինակել են Գեղանկարչության և ճարտարապետության ուղանողները և քաղաքային ճարտարապետ Յան Դոմսը (Հոլանդիա):</p> <p>19:00-23:00 «Լոյս ի լուսոյ» ինստալյացիա և Տիգրան Համասյանի կատարում Բտալիայի հյուպատոսարանում: *ամեն ժամը մեկ՝ պերֆորմանս մոտ 45 րոպե տևողությամբ:</p>
Ուրբաթ, հոկտեմբերի 30	<p>14:30 Երևանից մեկնող գնացքում կենդանի երաժշտություն, ժամանակակից պարային ներկայացում</p>	<p>19:00-23:00 «Լոյս ի լուսոյ» ինստալյացիա և Բտալիայի հյուպատոսարանում:</p> <p>20:00 կենդանի համերգ Լուսինե Սարգսյանի կատարմամբ Jazz Club-ում: Ամրագրել՝ +374 (0) 55 280280:</p>
Շաբաթ, հոկտեմբերի 31	<p>07:55 Երևանից մեկնող գնացքում էքսպերեմենտալ թատրոն, կենդանի երաժշտություն, ժամանակակից պարային ներկայացում</p>	<p>Օրվա ընթացքում տարբեր շրջայցեր Շիրակ թուրգի կողմից (պատմական Գյումրի, Մարմաշեն, արվեստանոցներ): Ամրագրել՝ +374 (0) 312 53148</p> <p>19:00-23:00 «Լոյս ի լուսոյ» ինստալյացիա և Բտալիայի հյուպատոսարանում:</p>
Կիրակի, նոյեմբերի 1	<p>11:45 Գյումրիից մեկնող գնացքում կենդանի երաժշտություն, ժամանակակից պարային ներկայացում</p>	<p>Այցելություն Վիլյա Կարս, խեցեգործության արհեստանոց, այցելություն Գյումրու ընկերներ հիմնադրամ: Ամրագրումը անհրաժեշտ է:</p>